

ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ

Տարեկան զինը 10 բուր, կէս տարվանը 6 բուր:
Առանձին համարները 5 կողակով:

Թիֆլիսում գրվում են միմայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Маяк».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կողակ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Հարցաքննութիւնների
առիթով: Նամակ Ախալքալաքից: Ներքին լուրեր:
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուրեր:
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ: Նկա-
րիչներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Մայիս և յունիս ամիսները, որ պիտաւորապէս
նշանակվում են տարեկան հարցաքննութիւնների
համար, շատ և շատ ծանր է թուում թէ ուսանող-
ների և թէ ուսումնարանական գործին ամենա-
մօտ անձինքների համար: Հարցաքննութիւնների
հարցը մեր տեղական մասուլի մէջ մինչև այժմ չէ
քննվել—սչ խօսվել է նրանց կազմակերպութեան,
և ոչ էլ նրանց նշանակութեան մասին, չը նայե-
լով որ այդ հարցը ոչ պակաս ուշադրութեան ար-
ժանի հարց է և թիւս մանկավարժական այլ և
այլ հարցերի: Քննութիւնների վրա շատ անգամ
նայում են իրեն մի վիճակաւով, վրա, որ դե-
թէ չունի ոչինչ նշանակութիւն, ու որ ամեն բան
կախված է բաղդի բերմունքից, կամ թէ հարցա-
քննութիւնները իսկապէս նշանակվում են ոչ թէ
աշակերտաց, այլ և գլխաւորապէս ուսուցչաց
գիտութիւնը չափելու ու նրանց դասաւանդու-
թեան ընդունակութիւնը ճանաչելու և ստուգե-
լու իսկ հոգաբարձուները, ուսումնական յանձնա-
ւորի անդամները, նա մասնաւորապէս այնպիսի-
մեծ մասամբ հակված են հաւատալով դպրոցի գրու-
թեան վրա արած դատողութիւնների ճշգրտեանը:
Քննութիւնների հետևանքներով: Բայց այդ բոլոր
դատողութիւնների ժամանակ շատ քիչ ուշադրու-
թիւն են դարձնում գործի նշանաւոր կողմի վրա,
այսինքն քննութիւնների կրթական ու դաստիար-
ակական նշանակութեան վրա: Մեծ մասամբ
պնդում են թէ՛ քննութիւնները յոգնեցնում ու
մարում են աշակերտաց, ինչպէս և նրանց ա-
ռողջութեանը և այլն: Մենք հաստատում ենք, որ
այդ ամենը կախում ունի քննութիւնների վատ
կազմակերպութիւնից, բայց իրապէս հասակա-
ւորները համար դրանք ունեն շատ մեծ կըր-
թական նշանակութիւն և նրանց առողջութեանը
կարող են այնքան չը վնասել, որքան այդ ապա-

ցուցանում են: Ամեն մի օրգանի առողջութեան
ու կեանքի առաջին պայմանը գործունէութիւնն
է, գործունէութեան մի առ ժամանակեայ գորե-
ղացումն, որ մի յայտնի ու նշանակեալ սահմա-
նից չէ անցնում, մինչև անգամ նպաստում է օր-
գանի ոյժերի զարգացմանը: Մենք շատ անգամ
առիթ ենք ունեցել դիտելու, որ գործունէութիւնը
բժշկական մի դեղ է, մի միջոց է, որ քայքայելով
գործարանի ոյժերը վերականգնեցնում է, իսկ գոր-
ծունէութեան նուազումն, իրեն հետեանք ծուլու-
թեան և երկիւղի նպատակով է գործարանի քայ-
քայմանը: Այդ իսկ պատճառաւ մենք ասում ենք
թէ՛ քննութիւնների վնասակար ազդեցութիւնը կա-
րելի է համարել իրեն հետեանք նրանց վատ կազ-
մակերպութեան, իսկ գործունէութեան գործողա-
ցումն և նրա մի որոշ ատիճանի լարված գրու-
թեան մէջ մնալը ինքն ըստ ինքեան վնասակար
հետևանքներ չէ յառաջացնում: Պիտի նկատել և
այն հանգամանքը, որ ուսման ազդեցութեան մա-
սին առողջութեան վրա՝ չէ կարելի կարծիք յայտ-
նել միայն նրա վրա վստահած ժամերի կամ ձեռք
բերած ազդեցութիւնների քանակութեամբը: Գըպ-
րոցական պարագային ազդեցութեան գործում ա-
շակերտների առողջութեան վրա՝ շատ մեծ դեր է
խաղում այս վերջիններիս բարոյական դրութիւնը
ու նրանց յարաբերութիւնը դէպի իրանց գործը:
Մենք չենք ուզում յայտնաբերել մեր յայտնած
ճշմարտութեան օգտին բերած ապացոյցներով,
այլ ուզում ենք բնականաբան մի քանի նկատու-
ղութիւններով: Յայտնի է, որ պարագայով այն
գործով, որը մենք ինքնինքն ենք ընտրել և մեզ
դուր է եկել, մենք կարող ենք աւելի շատ բան
գործել, քան թէ այն գործով, որը մեզ դուր
չէ գալիս: Այդ վերջին դէպքում թուականում է
մեզ բարոյական ճշմարտութիւնը:

Երկրորդ տեսակով ենք, որ այժմ համալսարան-
ներում և առհասարակ բարձրագոյն մասնագի-
տական դպրոցներում պահանջվում է աւելի շատ
և աւելի ծանր աշխատանք, քան թէ մի 10—20
տարի դրանցից առաջ, սակայն աշակերտացը զա-
նազան աշխատանքներով ծանրաբեռնելու մասին
զանգատներ չեն լսվում: Միջակայքը դպրոցնե-
րում դրեթէ միշտ զանգատվում են աշակերտներին
ծանրաբեռնելու մասին, թէ և վերջին թուական-
ների դիտողութիւնները ապացոյցին թէ ուսանող-
ները այժմ աւելի քիչ են աշխատում, քան թէ
10—20 տարի առաջ, բայց այժմ պարագայում են

գրեթէ բացառապէս պարտաւորեցուցիչ աշխա-
տանքով, իսկ առաջ, ընդհակառակն, պարտաւո-
րեցուցիչ աշխատանք աւելի քիչ կար, բայց դրա
փոխարէն ուսանողները ինքնուրոյն կերպով աւե-
լի էին աշխատում: Գառնալով մեր բուն խնդրին՝
նախ և առաջ բացատրենք այն թէ՛ տարեկան
հարցաքննութիւնները ինչ կրթողական ազդեցու-
թիւն կարող են ունենալ աշակերտաց վրա:

Իւրաքանչիւր առարկայ տարուայ ընթացքում
անցնում է մասն առ մասն, և եթէ ուսուցիչը
մինչև անգամ երբեմն-երբեմն կանգ է առնում
անցածի վրա մի ընդհանուր ակնարկ ձգելու նկատ-
մամբ, այնու ամենայնիս կրկնութիւնը լրիւ չէ կա-
րող կատարվել և կարճ միջոցում: Քննութիւնները
ստիպում են աշակերտներին կարճ միջոցում անց-
նել լրջօրէն ամբողջ դասընթացը, այդ շատ նը-
շանաւոր է ամբողջութիւնը հասկանալու համար:
Սովորական ժամանակը այդ տեսակ կրկնողու-
թեան համար շատ դժուար է—աշակերտները չեն
աշխատի այնպէս, ինչպէս քննութիւնից առաջ, որով-
հետև վերջինս ստատիկ է ներդրում իր բացա-
ռական դիրքով, նրանով, որ սովորական պա-
րագային յրջանից դուրս է համարվում: Բացի
դա՛ քննութիւնը ունի և կարող է բարեբար ազ-
դեցութիւն ունենալ աշակերտաց վրա այն պատ-
ճառաւ, որ նա ստիպում է աշակերտաց լարված
ոյժերով պարագիւր, պահանջում է աշակերտներից,
որ նրանք ստիպեն իրանց աւելի շատ աշխատել,
քան թէ սովորական ժամանակը, բայց ամեն մի
մարդ պիտի սովորէ ստիպել իրան դէպի, աշխա-
տանքը, դպրոցը, մեր կարծիքով, նմանապէս պիտի
ի միջի այլոց ուշադրութիւն դարձնէ այն բանի
վրա, որ աշակերտաց մէջ դարգացնէ մի տեսակ
պահանջ ստիպելու իրանց դէպի աշխատութիւն,
մի խօսքով նա պիտի զարգացնէ նրանց մէջ կամը:
Քննութիւնների անօգտակարութիւնը նրա մէջ է
կայանում, որ նրանք ստատիկ վրդովում են ու-
սանողներին սիրտը և հետաքննութեան կարող են
սխալեցնել մարդուն ուսանողների յառաջդրվու-
թիւնը գնահատելու ժամանակ, ապա ուրեմն այդ
դէպքում անարդարութիւնը կարող է շատ մեծ
դեր խաղալ, եթէ քննիչները, փոխանակ ի նկատի
առնելու աշակերտաց ամբողջ տարուայ աշխա-
տութիւնը, ուսանողների յառաջդրվութեան մա-
սին յայտնած կարծիքները կը հիմնեն գլխաւո-
րապէս նրանց տուած պատասխանների վրա՝ քնն-
նութեան ժամանակ, վերջապէս քննութիւնները

նպատակում են, ինչպէս և թուանշաններ դնելու
սովորութիւնը, փառասիրութեան և եսականու-
թեան զարգանալուն: Բայց այդ բոլոր վատ և
վնասակար կողմերը կարելի է հեռացնել, եթէ
քննութիւնների կազմակերպութիւնը փոփոխելու
լինենք, իսկ այն պահանջը, որ աշակերտները
կարճ միջոցում կրկնեն հերթով մի առարկայից
յետոյ միւսը և հաշիւ տան ամբողջ տարուայ
գործունէութեան մասին, ունի շատ լաւ կողմեր:
Աշակերտաց գիտութեան ատիճանը որոշելու ժա-
մանակ քննութիւնները չը պիտի ստանան ա-
ռաւ ջնստ կարգ նշանակութիւն, նրանք պիտի ու-
նենան միմայն լրացուցիչ քննական նշա-
նակութիւն: Բացի դա՛ աշակերտաց պիտի ապա-
հովեցնել պատահական անպիտանութիւններից: Ը-
րազարական պայմանները ի նկատի առնելով,
մենք այստեղ պիտի խօսենք միմայն ծիական ու
դրանց հետ միասին թեմական դպրոցներում կա-
տարվելիք քննութիւնների մասին:

Սկզբում մենք ասացինք թէ՛ մեծ նշանակու-
թիւն ենք տալիս քննութիւններին հասակաւորե-
րի համար, դրա նշանակութեան բացատրութիւնը
ցոյց է տալիս թէ ինչու քննութիւնները մասնու-
նեքի համար ունեն բարորակ ուրիշ նշանակու-
թիւն: Մասնուկները լարված դրութեան մէջ մնալ
շատ կը դժուարանան, կը դժուարանան նոյնպէս
և մինչև անգամ կը վնասվեն, եթէ ստիպեն ի-
րանց պարագիւր մի առարկայով, աշխատելու ու-
նակութիւն և սովորութիւն դեռ նրանք չեն ստա-
ցել, իսկ կրկնել անցածը կարճ միջոցում առանց կող-
մակի առաջնորդի—նոյնպէս դժուար է, վերջապէս
կարող են նրանք պարագիւր մի առարկայով մինչև
անգամ մի օրուայ ընթացքում: Եւ այդպէս, մենք
կարծում ենք, որ տարրական դպրոցներում քնն-
նութիւն, այն էլ մասն առ մասն, ոչ թէ իւրա-
քանչիւր առարկայից առանձին առանձին, այլ
զբանցից մի քանիսը մի յայտնի ժամանակաշրջա-
նում, որպէս զի չը ձանձրացնենք աշակերտաց
վերին ատիճանի միակերպ աշխատութիւնով:
Մի և նոյն ժամանակ հարկաւոր է յիշել, որ հա-
մակնորոնական եղանակի չորհրդ, որ մտել է
մեր դպրոցներում վերջին տարիներս, իւրաքան-
չիւր առարկայի էական կէտերը (այն փոքրիկ ծա-

ԲԱՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԻՉՆԵՐ

VII.

Գ. Կ. Գ. Վ.

Բիւսարինը վերջացրել է համարեա իր «խու-
կին» և այսօր ինձ կանչել էր նայելու նկարը:
Նրա մօտ գնացի կանխապէս կարծիքով և պէտք է
խոստովանել, որ ստիպված փոխեցի այդ կարծիքը,
քաշուածքը հիասթափ է, կաղապարված ընկերներն և
ամենից պրանչիլի է նկարի մասցածին և մի և
նոյն ժամանակ դերմանական լուսաւորված լինելը:
Նկարը անկասկած մեծ արժողութիւն կունենար,
եթէ չը լինէր նրա այդ օտարոտի և վայրենի սիւ-
սետը, 1. բոլորովին համաձայն է ինձ հետ այդ
մասին, և եկող շարքով նրա յօդուածը դուրս կը
գալ լրագրում, տեսնենք Բիւսարինը ինչ կասի:
1. համար ի հարկէ դժուար կը լինի նկարը
քննել տեխնիկայի կողմից, բայց նա կարող է նը-
րա վրա խօսել, ինչպէս արուեստի արդարեւ վրա,
որը (արուեստը) չէ կարելի ստորացնել մինչև այն
ատիճան որ նա ծառայի ցած և մշուշային դա-
ղափարներին:

1. այսօր ինձ մօտ էր, նկարս շատ է գովում,
մէկ քանի մանր դիտողութիւններ արեց, բայց
առհասարակ շատ է գովում: Ինչ լաւ բան կը լի-
նէր, եթէ պրօֆէսօրները նայէին նկարիս վրա նը-

րա աչքերով: Վերջապէս ես չը պէտք է ստանամ
այն, որին ձգտում է ձեմարանի իւրաքանչիւր
ուսանողը—ոսկի մեղալի: Մեղալ, չորս տարի
ձեմարանի հաշուով արտասահմանում մնալ, դը-
րա վրա աւելացրու ապագայում պրօֆէսօրի պաշ-
տօն ստանալը: Ոչ, ես չեմ սխալված որ ձգեցի
հասարակ կեանքի տխուր արհեստը, որտեղ ամե-
նայն օր իւրաքանչիւր քայլումը պատահում էս
Բիւսարինին խօսկիներին:

VIII

Բ. Ի. Ե. Բ. Ի. Ի.

Նկարը վաճառեցի և տարան Մոսկվա, նրա
փոխանակ փող ստացայ և ընկերներին պահանջ-
ման համեմատ պարտական եմ փողերի խնջոյք
տալ նրանց «վիլենա» հիւրանոցում, թէ ինչ ժա-
մանակվանից է մնացած սովորութիւնը, որ նկա-
րիչները անպատճառ այդ հիւրանոցում պէտք է
կազմեն իրենց խնջոյքները, ինձ յայտնի չէ, միայն
այսքանը գիտեմ որ բոլոր երիտասարդ նկարիչ-
ները իրենց խնջոյքները այդ հիւրանոցի անկիւնի
դահլիճումն են սպաքում, այդ դահլիճը բարձր,
մեծ սենեակ է, զարգարված զանով, բրօնզէ աշ-
տանակներով, խալիկներով և կարասիքով, որոնք
գահլիճումն են ժամանակից և ծիախառնի ծուխից,
նոյնպէս մէկ դաշնամուրով, որը իր դրութեան
օրից բաւական աշխատել է անպատրաստի և ա-
նուս դաշնակահարների դիտող զուարթացած մաս-
նեքի տակ, այդտեղ նոր է միայն ահագին հայե-
լին, որովհետև տարին երեք անգամ փոխվում է,

կրկ նկարիչների փոխանակ այդ անկիւնի դահլի-
ճում, քիչ է են անում վաճառականները:

Ամբողջ խումբ էր ժողովվել.—կային մարդանը-
կարիչներ (жаристы), տեսարան նկարողներ
(пейзажисты), քանդակագործներ և երկու անը-
շան լրագրների բեցենդենտներ և մէկ քանի կողմ-
նակի մարդիկ: Սկսեցին խմել և զոյց անել, կէս
ժամից յետոյ բոլորը միասին սկսան խօսել միան-
գամից, որովհետև արդէն բոլորը ևս զուարթացել
էին զինուց, և ես նոյնպէս, յիշում եմ ինձ ձեռ-
քի վրա առած օղի մէջ ձօնեցին և ես ձառ խօ-
սեցի, յետոյ համբուրվեցի բեցենդենտի հետ և մի-
մեանց հետ բարկակամութեան մոեմական բաժակ
խմեցինք (пять брудершафты):

Խմեցինք, խօսեցինք, համբուրվեցինք շատ և
առաւօտեան ժամի 4-ին մեր բնակարանները
ցրվեցինք, կարծեմ երկուսը մեղանից գիշերեցին
հէնց այն անկիւնի նստեցում «վիլենա» հիւրա-
նոցի:

Ես հաղիւ հազ տուն հասայ, առանց հանվե-
լու հանդերձով ընկայ անկողնուս վրա, նա-
ւի վրա եղած երեքման նման մէկ բան էի ըզ-
գում, ինձ թվում էր թէ սենեակը անկողնուս և
ինձ հետ միասին ձօնվում և պտտվում էր, այդ
գործողութիւնը տեսց մէկ քանի րոպէ և յետոյ
նիւնեցի:

Քննեցի և արթնացայ շատ ուշ, գլուխ ցաւում
է, մարմնիս վրա կարծես ծանր կապար են դրել,
աչքերս երկայն չեմ կարողանում բանալ, երբ

բանում եմ աչքովս է ընկնում դատարկ նկարա-
կալը՝ առանց նկարի, նա յիշեցնում է ինձ իմ
քաշած օրերը, հաս իմ հոգեկան տանջանքերս
սկսվում են նորից, ո՛հ, Աստուած իմ, Աստուած
իմ, հարկաւոր է վերջ դնել այդ բոլոր տանջանք-
ներին:

Գլխիս ցաւը հետզհետէ սաստկանում է, տըխ-
րութեան մշուշը տարածվում է վրաս, ես նըն-
ջում եմ և արթնանում և նորից սկսում եմ նըն-
ջել: Չեմ իմանում իմ շուրջ տրեւում է արեւօր
մեռելային լուսով թէ սարսափելի, անտուր,
խաղցուցիչ քառային աղմուկ, շատ կարելի է որ
լուսով թէ տիրում, բայց նորա մէջ մէկ բան
է հնչում, հարկանում, դառնում և թուշում,
ինչ է այդ: Հազարաւոր անգամից ջուր
վեր հանող ահագին ջրհան մեքենայի նման երե-
վում և գոռում է նա, կարծես լսվում են ընկ-
նող ջրի դրդիւնը և հարուածները մեքենայի, այդ
ամենի մէջ միայն տիրում է հոգի և սիրտ մա-
շուղ, լրկող, անհուն և անկրկնաւոր ճնշում: Կամե-
նում եմ բանալ աչքերս, անկողնուցս վերկենալ, մօ-
տենալ պատահական և բանալ նրան լսել կենդանի
մարդկային ձայն, կառքերի բաղխոց, շան հաջոց
և աղատվել այդ յաւիտեական ներքին աղմուց,
բայց ուժերս սպառվել են: Երէկ ևս հարած էի,
այդպէս ես ստիպված եմ պտկելու և լսելու, լը-
սելու այդ անկրկն ձայնը:

Յաճախ արթնանում եմ և նիւնում նորից, նո-
րից դրդում և թնդում է հեռուն աւելի ահագոյ,

աւարի որ կարելի է անցնել տարրական դպրոցում) ժամանակ առ ժամանակ նորոգվում են ուսանողների յիշողութեան մէջ: Անցածի վերջնական միաւորութեան համար և պիտի պարագել բոլոր անցածի կրկնողութեամբ դասընթացի վերջում: Հարցաքննութիւնները տարրական դպրոցում անտեղի են նա մասնաւոր այն ժամանակ, երբ ուսանողները թիւր մեծ է (բայց դա սովորական բան է), որովհետեւ այն միջոցին քննողները սաստիկ շտապում են (ախր հարցնել մի և նոյնը 50 աշակերտի շատ դժուար է), իսկ այն ինչ նրանք դպրոցում տարին մի անգամ են միայն գտնվում, և հետևապէս քննութիւններով են միայն չափում երեսայոց առաջադիմութիւնը:

Եթէ դրան յարակցենք և այն, որ քննողները երեսայոց երկար են քննում, վարվել նրանց հետ ոչ թէ միայն չեն կարողանում, այլ մինչև անգամ կամենում են «տալանտութիւն» թողնել, այն ժամանակ հասկանալի է, որ քննութիւնները ներկայումս տարրական դպրոցներում փաստակար նշանակութիւն են ստանում: Նրանք փաստակար են ոչ թէ ինքն ըստ ինքեան, վճռողական ազդեցութեամբ ուսանողներին բազմի վրա, պատահական դերով, բայց աւելի ևս իրանց ազդեցութեամբ գործի ընթացքի վրա՝ ամբողջ տարուայ ընթացքում: Ամեն դասակարգի ու սեռի քննիչներ առաջադրում են առհասարակ կամուրջ պահանջներ, բայց որովհետեւ բոլոր խիստնութիւնը նրանց ձեռքում է, այդ պատճառով ուսուցիչները կամայ և ակամայ պիտի հնազանդվեն ու յարմարվեն առաջադրած պահանջներին:

Իւրաքանչիւր գործին ամենամօտ անձի յայտնի է, որ ուսուցիչները շատ անգամ ստիպված են լինում իրանց ոչմիայն կենտրոնացնել մի քանի ընդունակ աշակերտներին վրա, որ նրանք քննութեան ժամանակ ուսուցիչ երեւր պարզեցնեն անեն, թէ և այդ բանը կարող է խանգարել կանոնաւոր պարագլուխները միաների հետ: Եթէ չը կան քննութիւններ, չը կայ և կոնտրոլ—կը մտածեն շատերը: Մենք կարծում ենք, որ կոնտրոլը շատ կարեւոր բան է, բայց աւելի լաւ կը լինի այդ կոնտրոլը թուլացնել, քան թէ տանել նրան ի փաստ գործի յառաջադիմութեանը: Այդ դպրոցի ղեկավարական ազդեցութիւնը պակաս նշանակութիւնը քննութիւն անգամ չը կայ, դաստիարակների դէպքի սաները ունեցած յարաբերութեանց կոնտրոլի մասին, մինչև անգամ փակ դպրոցներում, հազապարտութիւն չը կայ և կատարելապէս թողնում են դաստիարակական մեծ գործը դպրոցի իրաւասութեան, խառնվելով այդ գործի մէջ դրա վերաբերմամբ միմյանց: Որ և իցէ անկարգութիւն պատահած ժամանակ: Այն կերպաց կանոնաւոր դաստիարակութիւնը ապահովելու համար միայն մի միջոց գիտեն—ընտրում են չլուսավոր անձնաւորութիւն: Բայց, ի հարկէ, ուսուցիչ նշանակելու ժամանակ ընտրում են և բարեխղճը և հասկացողը:

Մենք կարծում ենք, որ հսկողութիւնը—կոնտ-

ռաւ, ահա նա աւելի մօտենում է և լավում որոշ հարուածները խիտում են համաձայն իմ երակազարկի հետ: Այդ հարուածները իմ ներսի կողմն են, զիսկ մէջ են, թէ ինձանից դուրս, բաղնում է նա բարձրաձայն, խիստ և որոշ... մէկ-երկու, մէկ-երկու... խիտում է նա միտադի վրա և մէկ այլ ուրիշ բանի վրա: Լսում եմ բաղնումները չուղտնի վրա, չուղտնը զոգանջում է և դուրս, սկզբում մութը դրոպիկանում է բուրբ կերպով, ինչպէս ճաճի վրա, բայց քանի գնում է նրա հարուածների ձայնը զլլում են զլլում է և վերջապէս ահագին կաթնան զոգանջում է ինչպէս զանգակ. յետոյ յաջորդում է դադար. նորից հարուածները սկսվում են ցած գնալով աւելի և աւելի բարձրանում են, նորից անտանելի և խլացողիչ ձայն: Ահա թէ ինչիցն է առաջանում այդ ամենը—սկզբում խիտում են մածուցիկ, ատրաշխ կերպով վրա, իսկ յետոյ սառում է երկաթը և զոգանջում է կաթնան, երբ բեռը տակաւակն է ամրացել է: Հասկացայ, այդ հասկացայ, բայց թէ դուրս—միւս ձայնները ինչ են. աշխատում եմ ըմբռնել դրանց, բայց ուղեղս պատվում մշուշով: Թվում է ինձ թէ այս դրութեան մէջ դիւրին է մտաբերել. դաւանում է նա յիշողութեանը մէջ, ահա յիշելի, բայց թէ ինչ բան—չեմ իմանում. իսկոյն և եթ չեմ կարողանում յիշել... թող նա բազմի, թողնենք նրան. ևս գիտեմ, բայց թէ չեմ մտաբերում:

Աղմուկը երբեմն աճում է և նուազում, երբեմն

բոլոր ուրիշ տեսակ պիտի կազմել, այսինքն հսկողութիւնը ուսուցչի պարագլուխը վրա պիտի լինի ամբողջ տարուայ ընթացքում: Հողաբարձուր կամ ուսումնարանական յանձնախմբի անդամները մտնելով դպրոց պիտի հսկեն պարագլուխը ընթացքի վրա, այդ պատճառաւ պիտի մնան այնտեղ ոչ թէ 2—3 ժամ, այլ մի քանի օր շարունակ:

Փորձառու մարդը մի քանի օր դպրոցում մնալով և բոլոր պարագլուխը ընթացքը տեսնելով, կարող է դպրոցի դրութիւնը բաւականին ճիշտ որոշել, գտնել անհամեմատ աւելի ուղիղ, քան թէ քննութիւններով. քննիչները մի և նոյն ժամանակ կարող են ճանաչել ոչ միայն ուսանողներին գիտութեան ու զարգացման աստիճանը, այլ և ուսուցչի գիտութիւնը ու նրա ընդունակութիւնը դաստանդութեան եղանակի մէջ: Բայց եթէ քննիչները առաջուայ նման կը հոգան զլլաւորապէս ուսուցչից յարգ ու պատիւ գրաւելու մասին և ուսուցչից կը պահանջեն ոչ թէ բարեխղճութիւն իր պարագլուխը մէջ և ցանկալի յառաջադիմութիւն, այլ հնազանդութիւն և հպատակութիւն ամեն բանի, մինչև անգամ գործը կառավարելու եղանակի մէջ, այն ժամանակ նրանց դպրոց յաճախելը օգտաւէտ չէ կարող համարել: Բայց որովհետեւ նրանց այցելութիւնը կարող է լինել անժամանակ, կարող է լինել տարբեր ոչ թէ մի, այլ երբեմն 2—3 անգամ (այնպէս տարի կը պատահի, որ մի անգամ էլ զարգւչ չեն մտնի, եթէ տեսի և ուսուցչաց բարեխղճութիւնը յայտնի է նրանց), ուստի նրանք կազմաւոր դպրոցը մի չափով—քննութեան համար մի քանի լաւ աշակերտներ պատրաստելու և կը ստիպեն ուսուցչին գործը անկողմնապահ և հաւասար կերպով տանել:

Քննութիւնները տարրական դպրոցում պիտի ոչնչացնեն և դրա փոխարէն պարագլուխը վերջին շաբաթում կրկնութիւններ նշանակել այն բոլորից, ինչ որ անցել են տարուայ ընթացքում, իսկ դասընթացը աւարտելու ժամանակ—և այն բոլորից, ինչ որ անցել են դպրոցում: Այդ պարագլուխները (աւարտող աշակերտաց հետ) պիտի տանել գրաւով վարձութիւններին հետ գուզնութաց, որոնցով աւելի ուղիղ կարելի է գնահատել աշակերտաց գիտութիւնը, աշակերտաց առաջ կը բարձրացնեն պարագլուխը նշանակութիւնը և այդ պատճառաւ կը ստիպեն նրանց աւելի լաւ կրկնելու դասընթացը:

Թեմական դպրոցներում, ուր աշակերտները հասակով աւելի մեծ են, քննութիւնները կարող են տեղ ունենալ: Իրանից նպատակը մինչ արդէնցից տուրի: Առաջուայ աստիճանից այժմ աւելացնում ենք այն, որ տարուայ ընթացքում պարագլուխը չըջանը ընդլայնելու համար մանկավարժական ժողովները իրաւունք պիտի ունենան թողնել երկրորդ տարին՝ առանց քննութեան: Ընդունակ, բայց ծով աշակերտները շատ անգամ չեն աշխատում ամբողջ տարուայ ընթացքում, ապակնելով իրանց ընդունակութեանը «ուղղել» քննութեան ժամա-

նանում է հրէշային քանակութեան, երբեմն կարծես բոլորովն անյայտանում է. ինձ թվում է ոչ թէ աղմուկ է անյայտանում, այլ ինքս եմ անյայտանում: Այնչէս չեմ լսում, այլ ինչիմանկար եմ, արտահանում չեմ կարողանում բարձրացնել: Անդգայութիւնը տիրում է վերստ, տարափը յափշտակում է ինձ. քնիցս սթափում եմ սաստիկ ջերմի մէջ. նիւրսում եմ, բայց դա իսկական թուն չէ. —թվում է ինձ թէ նորից գործարանում եմ, բայց ոչ այն գործարանում, որտեղ եղալ Իդիսովի հետ. այդ անհամեմատ ահագին է և աւելի մառախ, ամեն կողմից դարմանալի և չը տեսնված ձկնի վրիթալի վառարաններ են, բոլոր խորձ-խորձ դուրս է հոսում և սեպնում տանիքը և շինութեան պատը, որոնք վաղուց արդէն սեպած են, ինչպէս անոթ. մեքենաները ճօճում են և ճշում, ևս հաղիկ հաղիկ կարողանում եմ անցնել դառնող անիւներին և վազող ու դողողուն փոկերի միջով: Այդտեղ մարդու նշոյլ անգամ չը կայ, հետուն լսվում է բազմոց և զգրիկներ, ահա այնտեղ է առաջ գնում աշխատութիւնը. այնտեղ լսելի է կատաղի գոչիւն և կատաղի հարուածներ. ևս տակում եմ երկիւղից գնալ այնտեղ, բայց կարծես ինձ յափշտակում են և տանում: Հարուածների ձայնը աւելի բարձրանում է, գոչիւնները ևս աւելի ահաւոր են, և բոլորը միասին փոխվում են կատաղի մեղման և ևս տեսնում եմ... զլլում եմ մէկ անհեղեղ, այլանդակ էակ, որ զլլում է երկրի վրա հարուածներից, որոնք ա-

նակ: Պատասխանել ի հարկէ կարող են. եթէ պարտաւորութիւն կայ փոխադրել աշակերտին հարցաքննական թուանշաններով, այն ժամանակ չէ կարելի հերքել քննութիւնների վճռողական նշանակութիւնը. բայց այն գիտութիւնը, որ ձեռք է բերվում կարճ միջոցում—քննութիւնից փոքր ինչ առաջ և անընդհատ աշխատութիւնով մի տարուայ ընթացքում—մի և նոյնը չէ իր յատկութեամբ և արժանաւորութեամբ: Միայն այն աւարկաներից, որոնք պահանջում են զլլաւորապէս յիշողութեան զօրութիւն (նկարագրական գիտութիւններ), կարելի է պատրաստվել կարճ ժամանակում: Այնու ամենայնիւ տարրական թուանշանները աւելի մեծ կշիւ պիտի ունենան աշակերտացը դաստանդ փոխադրելու ժամանակ, քան թէ թուանշանները քննութիւնների ժամանակ:

Վերջիւնեայ նպատակներին հասնելու համար քննութիւնները չը պիտի սկսել և վերջացնել շատ կարճ միջոցում: Իւրաքանչիւր առարկայի նախապատրաստութեան համար պիտի այնքան ժամանակ նշանակել, որ քննողները (նրանք, որոնք ամբողջ տարին պարագել են բարեխղճաբար) հանգստութեան համար էլ ժամանակ ունենան: Աշակերտաց վիճակը ապահովեցնելու համար իրաւունք տալ նրանց, եթէ քննութիւնները անցաւոր են անցել, կրկին անգամ քննվելու կամ աշխատելու մի ուրիշ ժամանակ, եթէ առարկայի դաստանդում վիճակում է թէ նրանք ամբողջ տարին բարեխղճաբար են պարագել: Իսկ քննութիւնների եղանակը, որ շատ բազմազան կարող է լինել, ի հարկէ, պիտի որոշէ իւրաքանչիւր դպրոցի մանկավարժական խորհուրդը: Առ այժմ այսքանս, միւս անգամ աւելի կունենան խօսելու մեր դպրոցները դրական ու բացառական կողմերի մասին ընդհանրապէս, և մասնաւորապէս «Մարդ. Ընկ.» երկսեռ դպրոցների մասին:

Ա. Գալստեան

ՆԱՄԱԿ ԱՍԽԱՏԱԼԻՑ

Մայիսի 9-ին

Ինչ դրեմ ձեզ արգեօք այս անգամ: Ներկայումս ամենայն մի առօրեայ երեւթ, հասարակական կեանքից վերջածոր և է դէպք, մի խօսքով ամեն բան դժգոհանում, նսեմանում է այն ազդի համար ահագին նշանակութիւն ունեցող հարցի առաջ, որը լուծվում էր այս վերջին երեւթ օրերում, որը դրաւեցնում էր, գրաւում էր մեր ուշքն ու միտքը, մեր բոլոր կարողութիւնները, որ ծակում էր մեր ուղեղը, այս անվերջանալի երկար օրերում: Այդ միջոցին երկիւղ, կասկած, յոյս իրփոխաբար յաջորդում էին միմեանց. մի անգամ մտածում էինք. ինչպէս կարելի է որ այն անձինք, որոնք ամենայն կարեւորութիւն ունեն հայ ժողովրդի հետ հաշտ ասարելու, քանի որ վերջինիս միջոցներով են կերակրվում, ինչպէս կա-

մեն կողմից թափում են նրա գլխին. հարուածողները ահագին խումբ են կազմում, նրանց մէջ են և բերելով իմ ծանօթները. նրանք յափշտակելով ինչ որ ձեռքներին է ընկնում՝ արհեստաւոր երեսներով, ծեծում են մարմնով, փայտերով, բռնանցներով այդ էակին, որին որ և իցէ անուն տալ չը կարողացայ: Եւ իմանում եմ, այդ էակը նա է... ձեռքում եմ ինձ առաջ, կամենում եմ գոչել զդադարեցը, ինչու էք հարուածում դրան: Եւ յանկարծ տեսնում եմ գոհնատ, այլանդակ և զարհուրելի կերպարանք, զարհուրելի, որովհետեւ այդ իմ սեփական կերպարանքն է. տեսնում եմ ինչպէս ես ինքս, այլ ես ինքը, յափշտակում է մութը, որպէս զի տայ կատաղի հարուած...:

Այդ ժամանակ մութը իջաւ իմ գլխին. մի առ ժամանակ ևս դեռ զգում էի խաւարը, լուսութիւնը, դատարկութիւնը և անշարժութիւնը. իսկ չուտով ես ևս անյայտացայ:

Բիւսարինից պատկած էր մինչև երեկոյ բոլորովն ուշաթափ. վերջապէս բնակարանի չուսնումս տիկինը մտաբերելով որ բնակիչը այսօր սննեակից դուրս չէ ելել, մտածեց մտնել նրա մօտ և ներս մտնելով տեսաւ որ խեղճ պատանին տալանով անկողնու վրա սաստիկ ջերմի մէջ, իրանից դուրս դառանցում է՝ վախեցաւ և իր անհասկանալի բարբառով բացազանցութիւն արձա-կելով՝ աղախնուն ուղարկեց բժշկի յետևից: Բժշկին եկաւ, շոշափեց հիւանդի երակազարկը,

բերի է, ասում էինք, որ այդ մարդիկը այժմ երես դարձնեն ազգից, ինչպէս կարելի է որ չը կատարեն ընդհանուր ազգի ցանկութիւնը... սա-կայն այդ մարդիկը տեղի էին տալիս մի այլ մշտ-քի. ինչու չէ կարելի, մտածում էինք մենք, վերջապէս մի անվերջանալի մրցումն պէս-պէս զգացմունքների: Ամենամօտայլ գոյնով նըկարվում էր մեր երակազարկեան առաջ հեռանկարը այն դէպքում, եթէ ազգի ցանկութիւնը չը կատարվէր. մենք ոչ միայն կատարվելը իրողութիւն էինք համարում մեր բազմաթիւ տաճկահայ եղբայր հոգեպէս, հետևաբար և բարոյապէս պառակտուիլը, այլ և անկասկածելի էինք համարում նոյն իսկ ուսանալոց ստանու-թիւնը էլ միմեանից, որոնք հակառակ վարվեցան ազգի ցանկութեանը: Ահա թէ ինչպէս էր երեսմ մեզ ապագան, անյաջող դէպքում: Ասկայն ինչ է իցէ, այժմ այդ բոլորը այսօրվանից դառնում է պատմութեան սեպականութիւն, անաշուտ պատմութիւնը թող փայլեցնէ իր էջերի վրա ազգի խոհական մասի գործունէութիւնը կաթողկոտա-կան հարցի մէջ և ազգային օգտի համար աշխատողների անուններից յետոյ, թող այդ պատմու-թիւնը ու գոյններով գծէ Արարիկների ու Մեհրու-թանների անունները, թող պատմութիւնը աւանդէ ապագայ սերունդին թէ ինչպէս տասնեակ տարիներ եղծաւորութեամբ եկեղեցւոյ պաշտպան հանդի-սացողները, եկեղեցւոյ ճգնաժամի միջոցին, իրանց զէնքը չուս տուրն նոյն իսկ այդ եկեղեցւոյ դէմ, և այն ժամանակ թող ապագայ սերունդը ներկայի փորձից խրատված, աւելի չըջանկատ լինի, աւելի զոյշ վարվի: Թող պատմութիւնը հաղորդէ զազոց սերունդին, թէ ինչպէս խա-փանաթիկները չըբանում են միահամուռ մի ցանկութեամբ ներշնչված ազգի ճանապարհի վրա, թող իմանան որ Նիսիս պատմարարի ընտ-րութեան գործում իւրաքանչիւր քաղաքի, իւրաքանչիւր գիւղի հայ բնակիչը ըստ իր կարողու-թեան, ըստ իր իրաւասութեան, գեղեցիկ եռանդով աշխատեցաւ ցանկալի նպատակի համար, թող իմանայ որ հայ գրագետը իր գրչով, հայ վաճառականը, արհեստաւորը իր խօսքով, գիւղացին՝ իր ջերմ համակրութեամբ աշխատեցաւ մի և նոյն վախճանակէտի համար: Կեցցէ «Մշակը», կեցցէ «Արձագանքը», կեցցեն ազգային գործին նպաստող այլ թերթերը, իրանց աշխատակիցներով, կեցցէ Կ. Պոլսի Ազգային ժողովը, որ ապացուցեց թէ ինքը գտնվում էր իր դիրքի բարձրու-թեան վրա, մի խօսքով կեցցէ ազգի բարեմիտ բազմութիւնը՝ որ կաթողկոտական խնդրում ցոյց տուած իր եռանդով ապացուցեց, որ հայի մէջ չէ մեռած ինքնասանաւորութիւնը, ապացուցեց հա-յի կենսականութիւնը, ապացուցեց որ նա ապրում է և ունի ամեն շանսեր՝ երկար ապ-րելու:—Վերջապէս, երկարատեւ սպասումից յե-տոյ՝ Թիֆլիսի մի բարեկամի հետագիւրջըրվեց մեր կասկածը, երկիւղը...: «Նիսիսը ընտրուած է կաթողկոտ, Մեքենայերը՝ կանդիդատ», ահա այն խօսքերը, որոնք կայծակի արագութեամբ տարած-

կուրծքին տկանջ դրեց, անորոշ քթի տակին մըռ-մըթալով նստեց սեղանի մօտ՝ ընդհատ գրեց և հեռացաւ. իսկ Բիւսարինին շարունակ դառնացում էր և այս ու այն կողմը ընկնում:

IX

Դե գ օ լ

Խեղճ Բիւսարինին, երէկուայ քէֆից յետոյ հիւանդացաւ. նրա մօտ մտայ և ուշաթափ դրու-թեան մէջ գտայ. բնակարանի տիկինը հօգս է տա-նում նրա վրա. ևս Բիւսարինին փող թողցրի, որով հետև նրա սեղանի վրա մէկ կողմէ փող չը կար չեմ իմանում եղած փողը այդ անիծած կինն է թողել թէ «Ինչեւայն» է մնացել, իրաւ քէ-ֆի վրա բաւական միակը՝ թէ ևս ուրախ անցաւ. Բիւսարինին հետ մտերմական բարեկամութեան բաժակ խմեցինք, խմեցի նոյնպէս Լ.—ի հետ: Ինչ աղին հողու տէր մարդ է այդ Լ. ինչպէս հաս-կանում է արուեստը. իր վերջին յոշուածում շատ նուրբ կերպով էր հասկացել այն, ինչ որ ես կամե-ցել էի յայտնել իմ նկարով. այդ մասին հարկաւոր է խորին նորահասութիւն յայտնել նրան: Հարկաւոր է նկարել մէկ փղբոյի նկար՝ Ը. Այլ-վեր և ընծայել նրան. վաղը յարմար առիթ է այդ բանին՝ նրա անուանակոչութեան տօնն է, կար-ծեմ նրա անունը Ալեքսանդր է:

Բիւսարինին հիւանդութիւնը վատ հետեանք կունենայ. նրա մրցանակի նկարը դեռ վերջացած չէ, իսկ մրցանակի ժամանակը մօտ է. եթէ նրա հիւանդութիւնը մէկ ամիս տևի՝ այն ժամանակ

վեցան քաղաքին ընտելաց մէջ: Մեզ դեռ ես յայտնի չէ իւրաքանչիւր ընտրելի ստացած ձայնների քանակութիւնը, այսքանը միայն յայտնի է որ Ներսէսն է մեծամասնութիւն ստացողը և մեր յայտը մեծ է, որ ուստաց քաղաքինամ կառավարութիւնը կատարելով իր հաւատարմ հպատակ հայերի ցանկութիւնը՝ կը հաստատէ ազգի ընտրածին Հայկական եկեղեցւոյ առաջնակարգ Աթոռի վրաս Հայ ժողովրդի վրա հեռագրի գործած տպաւորութիւնը Ներսէս պատրիարքի ընտրվելու մասին, այնքան բուռն էր, այնքան բնաւորիչ, որ անհրաժեշտ եմ համարում մասնակից անել դրան՝ «Մշակի» ընթերցողներին: Չը տեսնված ուղևորութեամբ լսում էր հայը այդ ուրախալի լուրը և «Փառք Աստուծոյ» բացազանչում, կային և այնպիսիք, էֆֆէէկտ գործելու համար չեմ ասում —, որոնք գլուխները մերկացնելով՝ երեսներն էին խաչակնքում: Վաղը բազմաթիւ խմբերով պատրաստվում են տօնել այս նշանաւոր իրողութիւնը՝ Սրբազան Ներսէսի ընտրութիւնը: ***

ՆԵՐՍԵՍԻ ԼՈՒՐԻՐ

Ստացանք հետեւեալ հեռագիրը Երևանից: «Ներսէսի հայերը տուեցին ճաշ ի պատիւ պատգամաւորների: Պ. Մելիք-Մելիքբեկ Ներկայ էր համագլխավոր: Երևանի արքեպիսկոպոսը Թագաւոր կայսրի կենացն առաջարկեց, որ ընդունվեցաւ մեծ ոգևորութեամբ: Ներսէսի ամուսնը մեծ համակրութեամբ ողջունվեցաւ: Ժողովուրդը ուրախ է Ներսէսի ընտրութեան պատճառով: Ներսէսի նոր հրաժարականը չընդունվեցաւ, և պատասխանեցին որ ժողովը արդէն ջրված է, անդամները գնացած են և ոչինչ չէ կարելի անել:»

Ստացանք Երևանից հետեւեալ հեռագիրը: «Կ. Պոլսի Ազգային ժողովի բաժնի նախագահ, Խորէն արքեպիսկոպոս և Մաքսուտ Սիմոն Էֆէնդի չնորհաւորում են Էջմիածնի պատգամաւորների ժողովը և չնորհակալութիւն են յայտնում Մակար արքեպիսկոպոսին ընտրութիւնների աջող ելքի համար:»

ԱՅՈՒՄԱՆԱԿԱՆ մեզ գրում են, որ ամուսնու Եւսի այնպէս շքեղ հանդիսով կատարվեցաւ. Դորին կայսերական Բարձրութեան Թագաւորական չափահասութեան տօնը: Այգին և չրջակայ աններ լուսաւորված էին: Այգում ամուսն էր գուման և ղինւորական երաժշտական խումբը:

Նոյն տեղից մեզ գրում են հետեւեալը: «Այս րօպէիս տեղույս երկաթաուղիները ժողովված տօնում է Ներսէս պատրիարքի ընտրութիւնը: Վճռված է Ներսէս պատրիարքին հեռագրով չնորհաւորել:»

«Кавказъ» լրագրի մէջ կարդում ենք. «Մեր

մեզալ չէ կարող ստանալ, այն ժամանակ մնաս բարեւ արտասահման: Ես չառ ուրախ եմ որ իրք տեսարան նկարող Ռեպրինինը իմ հակառակորդս չէ, իսկ նրա ընկերները ուրախութիւնից ի հարկէ ձեռքները կը շինեն, թէ ես այն ես պէտք է ասած որ մէկ տեղ աւելորդ է: Ռեպրինինը չը պէտք է անոր թողնել, հարկաւոր է հիւանդանոց տանել նրան:»

X
ԲԻԼԱՐԻՆԻՆ

Շատ օրեր շարունակվող երկայն ուշաթափութիւնից այսօր սթափվեցայ. մտածում էի թէ ես այս օրտեղ եմ: Սկզբում մինչև անգամ չէի հասկանում թէ այդ ինչ երկայն սպիտակ ծրար է պատկած աչքիս առաջ, դա իմ սեփական մարմինն էր փաթկաթված վերմակի մէջ: Մեծ դժուարութեամբ գլուխս դարձնելով աջ և ձախ, որից և ահանջներ սկսան մարմնակն՝ տեսայ թող լուսաւորված սենեակը շարված երկու կողմից մահաւարկներով, որոնց վրա պառկած էին փաթկաթված հիւանդների կերպարանքներ: Երկայն ցած թողնված սպիտակ վարդաղբերով երկու մեծ պատուհանները մէջ տեղը կարծես կանգնած էր մէկ ասպետ պինդէ սպառազինութեան մէջ, ինչպէս երեսեցաւ դա մէկ ահագին պինդէ երես և ձեռքեր լուսնաւոր անօթ էր. տեսայ նոյնպէս երկու ահագին վառարաններ և Փրկչի պատկերը, որի առաջ վառվում էր քաջարած կանթեղը: Լսեցի հանդիս, ընդհատվող չնաւաւորները դրացուս և ղըլ-

կովկասեան գաղթական լեռնականները մինչև այժմ Թիւրքիայում ազատ էին ղինւորագործութիւնից և թէպէտ մի քանի տարի առաջ հրատարակվեցաւ սուլթանի իրազէն, որով ղրկվում էին ներսերն այդ արտօնութիւնից, բայց այդ իրազէն ամեն տեղ ընդդիմութեան հանդիպեցաւ և չիրագործվեցաւ: Այժմ հրատարակվեցաւ սուլթանի նոր իրազէն ուղղված պատերազմական միջոտութիւն, որով ղինւորագործութեան են ենթարկվում բոլոր չեղքեղները և կովկասեան ուրիշ լեռնականները, որոնք բնակութիւն ունեն հաստատած Թիւրքաց կայսրութեան սահմաններում:»

«Русский Курьеръ» լրագրի մէջ կարդում ենք. «Այժմ գործադրվող Քաղաքային Կանտոնադրութեան վերաբնման անհրաժեշտութիւնը գործնականութեան մէջ անյարմար գտնված նրա առանձին յօդուածները փոփոխելու և լրացնելու նպատակով ճանաչված է մեր կառավարութիւնից: Այժմ մեզ հաղորդում են, որ Քաղաքային Կանտոնադրութեան գործադրութեան ժամանակ աչքի է ընկնում այն մեծ անյարմարութիւնը, որ քաղաքային անձնատրութեան մէջ միասնական քաղաքային դուստրի և քաղաքային վարչութեան նախագահի պաշտօնները: Այդ անյարմարութիւնը զգալի էր դեռ Քաղաքային Կանտոնադրութիւնը կազմելու ժամանակ, որովհետեւ քաղաքային դուստր համարվում է մի այնպիսի հիմնարկութիւն, որը վճիռներ է կայացնում և կոնտրոլ է անում քաղաքային վարչութեան գործադրութիւնների վրա, իսկ վերջինը համարվում է կատարող օրգան, և քաղաքայինի նախագործիւնը երկու հիմնարկութիւնների մէջ ճնշում է քաղաքային դուստրի ազատութիւնը կատարող իշխանութեան գործողութիւնները ստուգելու ժամանակ, այն գործողութիւնները, որ գտնվում են նոյն քաղաքայինի ձեռքում և վերջինին իր սեփական գործողութիւնների դատարան է դարձնում: Ապագայում այդ բանի առաջն առնելու համար նախագծվում է քաղաքային վարչութեան խորհրդակցական և կատարող օրգանները գործունէութիւնը անջատելու համար, բաժանել դուստրի և վարչութեան պարտաւորութիւնները, թողնելով քաղաքայինի նախագահին վարչութեան մէջ, իսկ դուստրի նախագահ ընտրել ձայնաւորների միջից մի տարի ժամանակամիջոցով: Այժմ գործադրվող քաղաքային կանտոնադրութեան հիման վրա միայն քաղաքայինի և վարչութեան անդամներին է արգելվում քաղաքային տնտեսութեան առարկաների կապալառու և հայթայթող լինել: Իսկ որպէս ղի դուստրները կատարելապէս ազատ և անկեղծ կերպով վերաբերվեն դէպք քաղաքային վարչութեան գործունէութիւնը, նախագծվում է արգելել դուստրի բոլոր ձայնաւորներին քաղաքային տնտեսութեան առարկաների կապալառու առարկաների կապալառու և հայթայթող լինել: Եւ վերջապէս, որովհետեւ գործնականութիւնից յայտնի է, որ դուստրի ձայնաւորները յաճախ չեն մասնակցում դուստրի նիստերին, որ չառ վնաս է տալիս հասարակական գործերի ընթացքին, մտա-

ղղացնող հեռու պառկած հիւանդի հաւաչանքը, նոյնպէս մէկ երկրորդի հանգարտ մշտնջը և դիւցազնական խորոյը պահպանի, որին պատուիրած է թերեւ հակա ծանր հիւանդի մօտ, որը ով գիտէ այժմ կինդանի է թէ մեռած, և նա ես պառկած է այստեղ այնպէս, ինչպէս մենք կենդանի մնացածներս:

Մենք կենդանի մնացածներս... «Կենդանի» մրմնջացի ես մինչև անգամ: Յանկարծ ես զգացի մէկ տեսակ ուրախութիւն և հանգստութիւն, որի նմանը չէի զգացած մանկութիւնից ի վեր: Ճանաչողութիւնս վերադարձաւ, զգացի որ մահը դեռ հեռու է ինձանից, որ դեռ իմ առաջ մէկ ամբողջ կենդե կայ, որը կարող եմ ես ուղղել այնպէս ինչպէս կը կամենամ (չառ հաւանական է որ կարող եմ), այդ ժամանակ դժուարութեամբ դառնալով մէկ կողքիս վրա՝ ձեռքիս ափը գլխիս տակը դրեցի և ջուռ եղայ այնպէս, ինչպէս մանկութեան օրերում, երբ մօրը կողքին քնած գիւնը ժամանակ հողմը փչում է պատուհանի տակ, կամ մրբիլը ոռնում է ծննդելովի մէջ կամ աստիկ պարզկայից արաքտարաբլում են, ինչպէս ատրճանակի, տան գերանները և դու արթնանալով սկսում ես լալ ցած ձայնով, որպէս ղի մօրը քունը չը խանգարես, բայց մի և նոյն ժամանակ ցանկանալով որ նա արթնանայ, և ահա արթնանում է նա, քունը ղլլին համբուրելով և խաչակնքելով հանգստացնում է քեզ. իսկ դու, փաթկաթվելով կուշ ես գալի վերմակիդ տակ և

գրութիւն կայ միջոցներ գործ դնել դրդելու համար ձայնաւորներին իրանց պարտաւորութիւնները կատարել: Այդ բանի համար ամենալաւ միջոց համարում են գրամական տուգանք առնել նիստին ներկայ չեղող ձայնաւորներից:»

«National Zeitung» լրագրին գրում են, որ Ս Գ է ս ա յ ու մ ն ո ռ ե ռ ու մ գ տ ե լ են մի ս տ ո ռ ե ռ կ ը ա յ ան ց ք: Այդ ստորերկրեայ անցքը բուրովին անսպասելի կերպով բացվեցաւ: Այդ անցքը, թղթակցի խօսքերով, այս անգամ անիշխանականների ձեռքերի գործ չէ և նրա կառուցումը մի որ և է մարդու կենքիցն սպառնալու նպատակ չունէր: Դա չինված է միայն գաղտնի, բայց յարմար հաղորդակցութիւն ունենալու համար մաքսատան հետ: Այն հանգամանքը, ասում է թղթակցից, որ այդ ստորերկրեայ անցքում գնանված է կոնտրաբանդ թէլի մեծ քանակութիւն, ասպաղոցանում է ստորերկրեայ անցքի խկական նշանակութիւնը և դուշակել է տալիս, թէ օր քալին են պատկանում այդ անցքը շինող անհատները: Մի և նոյն ժամանակ թղթակցից ծագական կերպով նկատում է, որ Ռուսաստանում այդպիսի անտուր ճանապարհը բոլորովին պատահամբ գտնվեցաւ: Վերջին ժամանակ Ողէսասում յորդ անձրների էին գալիս: Այդ պատճառով փաստային փողոցի վրա դանդաղ սալաքառակը փչացաւ, ուղիղ պետական բանկի շինութեան և մաքսային վարչութեան անեղից մէկի մէջ տեղը: Իշխանութիւնը բանտերն ուղարկեց այնտեղ, վախենալով որ չը փչանան այն խողովակները, որոնցով ջուր է անցնում սալաքառակների տակ: Հէնց այդ աշխատութիւնների ժամանակ յայտնվեցաւ, որ մաքսատան մօտ, դէպքի ուղղութեամբ անց է կացած ստորերկրեայ ճանապարհ: Թէ օրքան ժամանակ գաղտնի գոյութիւն ունէր այդ ճանապարհը և թէ օրքան թանգ նստեց այդ ստորերկրեայ հաղորդակցութեան գոյութիւնը գտնաւորելին, — թղթակցի խօսքերով, — չառ հեշտ չէ իմանալ:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

«Հիւսիսային հեռագրական գործակալութեան» փաթիլից հեռագրում են, որ պատգամաւորների ժողովում երէկ առաջարկված է մի օրինադիմ սահմանադրութեան վերաբնութեան մասին: Նախագի միակ յօդուածով առաջարկվում է յայտնել հանրապետութիւնը որպէս վարչական վերջնական ձև, փոփոխել ընտրութիւնների կարգը սենատում, ոչնչացնել անփոփոխ սենատորների ինստիտուտը և սահմանափակել սենատի իրաւունքները բնութագրային խնդիրներ վճռելու մէջ:

Ջուռ ես լինում ուրախացած քո մանկական հողովը:

Ինչպէս թուլացած եմ, Աստուած իմ. փորձեցի այսօր կանգնել անկողնուցս և դնալ դիմացի դրացուս՝ մէկ ուսանողի՝ որ նոր է առողջացել տենդից, մահաճախելի մօտ, կէս ճանապարհին հագնել հալի. դետին չընկալ, բայց գլուխս մարմնիցը աւելի արագ է առողջանում, երբ սթափվեցի համարեա ոչինչ չէի կարողանում յիշել շատ զրոյվարութեամբ էի մտաբերում մինչև անգամ ահա՛նները մօտիկ ծանօթներեա, իսկ այժմ բոլորին ես յիշում եմ, բայց ոչ իբրեւ անցեալ իրականութիւն, այլ իբրեւ երգով:

Այսօր ինձ Գեղովը բերեց մէկ ամբողջ լրագրից, մահաճախելի մօտ, կէս ճանապարհին հագնել հալի. դետին չընկալ, բայց գլուխս մարմնիցը աւելի արագ է առողջանում, երբ սթափվեցի համարեա ոչինչ չէի կարողանում յիշել շատ զրոյվարութեամբ էի մտաբերում մինչև անգամ ահա՛նները մօտիկ ծանօթներեա, իսկ այժմ բոլորին ես յիշում եմ, բայց ոչ իբրեւ անցեալ իրականութիւն, այլ իբրեւ երգով:

— ձմարիւմ է այդ:
— Բուրբուլին ճշմարիտ է, պատասխանեցի ես:
— Ուրեմն ինչ պէտք է անէք:

Ֆէրրին երէկ պատգամաւորների ժողովում կարգաց մի գրութիւն, որով ապացուցանում էր թէ անհրաժեշտ է սահմանափակել սահմանադրութեան վերաբնութեան օրինադրում բերված կէտերով. մեծամասնութիւնը համակրութեամբ վերաբերվեցաւ միմիսարի հաղորդութեանը. ծայրայեղ ձախկողմը յաճախ ընդհատում էր ընթերցանութիւնը հեղնական ծիծաղով:

— Լրագիրների մէջ կարդում ենք, որ մայիսի 11-ին, 5 ժամին կէսօրից յետոյ, Տիւնդիւնում, Լիւխունդ-Չանդ փոխարքան և գեներալ Ֆուրնիէ, որը երեք օր դրանից առաջ լրագրութիւնից, ըստացել ֆրանսիական կառավարութիւնից, ըստադրեցին չորս յօդուածներեց բաղկացած դաշնագիրը, որով խաղաղութիւն է հաստատվում Ֆրանսիայի և Չինաստանի մէջ: Առաջին յօդուածով, Ֆրանսիան պարտաւորվում է յարգել և պաշտպանել, և թէ կը հարկաւորվի, Տօնկինի կողքին գրտնվող Չինաստանի հարաւային սահմանները: Իր կողմից Չինաստանը, որպէս երկուս է երկրորդ յօդուածից, պարտաւորվում է այդ սահմանները անյապաղ յատ կանչել դէպի երկրի խորքը չինական զօրքերը և Տօնկինի բոլոր բերդաւան դունդերը: Բացի դրանից, Չինաստանը խոտտանում է «Ներկայումս և ապագայում յարգել այն բոլոր դաշնագիրները, որոնք կապված են, կամ կապվելու են Ֆրանսիայի և Վնամի կառավարութեան մէջ»: Երրորդ յօդուածը ասում է, որ «որպէս չընորհակալութիւն Չինաստանի խաղաղասիրական ձգտման և ի փոխարքայի ազգասիրութեան, որ երեսեցաւ այդ դաշնագրի ամեն բանակցութիւնների ժամանակ, Ֆրանսիան հրաժարվում է Չինաստանից արտերադրական տուգանք պահանջելուց»: Իսկ Չինաստանը, իր կողմից, պարտաւորվում է այդ բանի համար թոյլ տալ հարաւային սահմանի ամբողջ տարածութեան վրա առևտրի ազատութիւն և ապրանքների տեղափոխում: «Վնամի և Ֆրանսիայի մէջ մի կողմից, և Չինաստանի և Ֆրանսիայի մէջ մի կողմից: Այդ նպատակով առևտրական և մաքսային դաշնագիր կը կապվի «ամենահաշտ մտքով չինական վաճառականների կողմից և ամենաձեռնառու պայմաններով Ֆրանսիական առևտրի համար»: Դրանով վերջանում է չորրորդ յօդուածը: Իսկոյն դաշնագիրը կապելուց յետոյ, երկու կառավարութիւններն էլ կը նշանակեն իրանց լրագրողներին, որոնք երեք ամիս անց ներուց յետոյ կը ժողովվեն դաշնագրի հիմունքները վերջնականապէս ընկելու համար: Հետեւեալ օրը Ֆուրնիէ ճաշում էր փոխարքայի մօտ, իսկ վերջինը յետոյ հրաբիրվեցաւ ֆրանսիական հիւպատոսարանը, որը զարդարված էր ֆրանսիական և չինական դրոշակներով և գեղեցիկ կերպով լուսաւորված էր: Եւ այդպէս Տօնկինի հարցը վճռված և Տօնկինի արշաւանքը վերջացած է:

ԽՈՐԱԳԻՐ-ՀՐԱՄԱՐԱԿՈՂ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՈՒՆԻՒ

— Դրա վրա յետոյ կը մտածեմ:
Նա ինձանից հեռացաւ. բոլորովին ընկած տաւակուսանքի մէջ:

XI

ԴԻԳՕՎ

Այս երկու շաբաթը անցել եմ բոլորովին մշուշի, յուզմունքների և անհամբերութեան մէջ. այդ ամենից հանգստացայ հէնց այս ժամիս, երբ նըստում եմ Վարչակալի երկաթուղու վագօնի մէջ. ես ինքս ինձ չեմ հաւատում — ես այժմ ձեռնարկի թոշակադիրն եմ, չորս տարով արտասահման գընացող արուեստի մէջ կատարելագործուելու նկարիչ եմ. Viva Academia!

Բայց Ռիեպրինը, այսօր նրան պատահեցի՝ փողոցում, երբ արդէն կատարել էի նստում երկաթուղու կայարանը գնալու. «չնորհաւորում եմ ձեզ և դուք ես չնորհաւորեցէք ինձ», ասաց նա:

— Ինչ բանի համար:
— Հէնց նոր բռնեցի քննութիւն ուսուցչական սիմիւնարեան մտնելու:

Մտնում է ուսուցչական սիմիւնարեան այդպիսի նկարիչը, այդպիսի տաղանդը. չէ որ նա կը կորչի, կը փչանայ գիւղումը, դէ ասացէք ինչպիսի, այդ մարդը գծված չէ արգեօք:

Այս անգամ Գեղովը իրաւացի էր. Ռիեպրինին իսկապէս չը յաջովեց այդ գործը: Բայց այդ մասին մի այլ ժամանակ:

Միսաք Ասիկեանց

Типографія Канцелярії Главнаоч. Гражд. час., Лорисъ-Меликовская у., д. кав.